

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1302-Կ

« 28 » 08 2009 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՅՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Էվրիկոմպ-Թեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի մարտի 30-ին «Պետության կարիքների համար կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման պայմանագիր» ԱՊՁԲ-09/12-1 պայմանագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն անհատույց օգտագործման հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Էվրիկոմպ-Թեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի մարտի 30-ին «Պետության կարիքների համար կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման պայմանագիր» ԱՊՁԲ-09/12-1 պայմանագրով ձեռքբերված անխափան սնուցման սարք 1 (այսուհետ՝ Գույք):

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի
առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Ա.Կարապետյանին՝

- 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետից բխող ֆինանսական հաշվարկների և նշված գույքի
հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ